

372
NL-75


0120-10

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ



1936



Տպարան «ՍԱՀԱԿ-ՄԵՄՐՈՊ», Գանիք

372

PL-75

27 AUG 2019

50.567

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՐԵԳՈՐԾՎԱԿԱՆ ՀԵՂԴԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՈՒՍՏԱՆ ԾՐԱԳԻՐ

Գաղթահայ Նախակրթաբներու

Որքան որ գնահատելի է այն նախանձախնդրութիւնը զոր արտասահմանի մէջ ցոյց կուտան առհասարակ ամէնէն փոքր գաղութներն իսկ, ամենայն փութեկոտութեամբ ազգային վարժարաններ նիմնելով եւ վարելով, որպէսզի գաղթական մանուկներ տնհային նախակրթութեամբ դաստիարակուին եւ մայրենի լեզուին ու ազգային պատմութեան ժիրանան, նոյնին եւ ցաւալի է որ ընդհանրապէս առանց ուսման ծրագրի կամ շատ անկատար ծրագրով մը կը կառավարուին այդ վարժարանները:

Սյդ մասնօգութեամբ է որ Հ.Բ.Լ.Միութիւնը ձեռնիաս մասնագէտներու պատրասել տուած է ներկայ Ռուսան Ծրագիրը, որ ո՞չ միայն կ'ապահովէ գաղութահայ նախակրթութեան միաձեռութիւնը, այլ եւ կը լրացնէ մանկավարժութեան արդիական պայմանները։ Բնականարար զանազան երկիրներու մէջ պատրադրուած կրթական օրէնքներուն նամաձայն, մասնաւոր տրամադրութիւններ պէտք է նաև ներմուծել սոյն Ծրագրին մէջ, լայն տեղ տալով երկրին լեզուին։

Ուսի կը յանձնարարուի գաղութահայ վարժարաններուն եւ սիրառաբար Հ. Բ. Լ. Միութեան ներակայ կամ նպասլնեկալ վարժարաններուն, զործադրել սոյն Ծրագիրը, որպէս յարմարագոյն ուղեցոյց մը անկէ օգտընելով՝ կարելիր եան սահմանին մէջ։

Քարիզ, 1 Յունիար 1936



63273-67

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Կազմակերպել Մանկապարտէզի ընթացք մը երկու տարիի վրայ, ուր՝ Մանկապարտէզներու յատուկ շատ ծանօթ վարժութեանց եւ խաղերու քով՝ աւելցնել նաեւ տեղական լեզուի նախական տարերք մը, բառամթերքի եւ փոքր նախադասութեանց կազմութեան մարզումներով։ Մատաղ տարիքէն սկսող անճիգ եւ գրեթէ անգիտակից այդ հրահանգումը իր կարեւոր նպաստը կը բերէ հետագային այդ օտար լեզուին ուսուցման տեսակէտով։

Ա. ԴԱՍԱՐԱՆ

1. ԿՐՈՆԲ ԵՒ ԲԱՐՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ա) Բարոյական տպաւորութիւններ յառաջ բերելու նպատակով՝ կենդանի գոյներով պատմել եւ պատմել տալ Հին Ռւխտէն ընտրուած դրուագներ։

բ) Կրօնական եւ բարոյական մանր պատմուածքներ, առակներ, բանաստեղծութիւններ՝ տղոց մէջ արթնցնելու համար բարիին զգացումը եւ մշակելու համար ազնիւ ունակութիւններ։

գ) Տէրունական աղօթք, ուրիշ կարեւոր աղօթքներ, ուղիղ արտասանութեամբ եւ հասկացողութեամբ։

2. ՀԱՅԵՐԵՆ

ՀՆԹԵՐՑԱԽՈՒԹԻՒՆ. —

Ուղիղ ընթերցում փոքր հատուածներու. բացատրութիւն իմաստի ու գժուարին բառերու. բերանացի ամփոփում կը տորի մը մէկ մասին կամ ամբողջութեան. բառագիտական տարբական վարժութիւններ։ Արտասանութիւն շատ պարզ բանաս-

տեղծութեանց. վերաբռտադրում ուսուցին կողմէ կատարուած-պատմուածքներու:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քերանացի ծանօթութիւններ կէտադրութեան եւ առողանութեան նշաններու, ծայնաւոր եւ բաղաձայն տառերու, հասարակ եւ յատուկ գոյականներու եւ գոյականի թիւի մասին:

ԳՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ

Արտագրութիւն կարգացուած հատուածին. պատրաստուած կարճ ուղղագրութիւններ. թելադրութեամբ շարադրում փոքր նախադասութեանց:

3. ՏԵՂԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Խօսակցութեան վարժութիւն ուղիղ մեթոսով (méthode directe) նիւթ ունենալով տղուն շրջապատի առարկաները եւ իրազննական պատկերներ: Ընթերցանութիւն. բացատրութիւն, օտար լեզուով հարցու մներու միջոցաւ. թարգմանութիւն նոյն լեզուէն ի հայ: Քերականական տարրական ծանօթութիւն ծայնաւոր եւ բաղաձայն տառերու, եզակի, յոգնակի: Բեզում. արտասանութիւններ եւ ուղղագրութիւն:

4. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1—100 թիւերու վրայ մտաւոր եւ գրաւոր վարժութիւններ. գումարում, հանում, բազմապատկութիւն եւ բաժանում. 2—3 թիւերը աւելցնելով եւ պակսեցնելով համրել. աշակերտներու կեանքէն առնուած գործնական խնդիրներ (ոյժ տալ մտաւոր վարժութիւններու):

5. ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Քանի մը նշանաւոր դէմքեր եւ դէպքեր Ազգ. Պատմութենէն.— Հայկ. Արամ. Արայ գեղեցիկ. Վահագն. Արտաշէս Աշխարհակալ. Մեծն Տիգրան. Գր. Լուսաւորիչ: Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ. Վուամշապուհ. Սահակ-Մետրոպ. Հայ գիրերու գիւտը. Վարդան Մամիկոննան. Վահան. Գայլ Վահան. Աշոտ Ռուբրմած. Գագիկ Բ.,

Լեւոն Բ., Լեւոն Զ., Դաւիթ պէկ. Մխիթար Աքբա. Ներսէս Աշտարակեցի. Պէտքեան Ամիրա. Խրիմեան Հայրիկ. Նուպար Փաշա. Անդրանիկ: Հայկական դիւցազնավէպեր.— Տորք Անգեղ. Մհեր. Սասունցի Դաւիթ: Տոհմիկ հէքիաթներ:

6. Ա. ԾԽԱԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Զննութեան վարժութիւններ. հորիզոն. գլխաւոր կողմեր. արևելում. հողի անհարթութիւններ. ջուրեր. եղանակներ: Երկիրը, իր ծեւը, իր բաժանումները: Բացատրութիւն աշխարհագրութեան ամէնէն գործածական եզրերուն: Պատրաստութիւն քարտէսի հասկացողութեան համար. դասարանին, դպրոցին, հաստատութեան յատակագիծը: Շատ համառօտ աշխարհագրութիւն տեղական:

Զննութիւններ եւ պարզ բացատրութիւններ սովորական երեւոյթներու, ծանօթ առարկաներու, կենդանիներու, բոյսերու, հանքային մարմիններու մասին. գործածական կարգ մը տարազագործուած նիւթեր: Գործնական վարժութիւններ առողջապահութեան:

7. ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

Մատիտով վարժութիւններ ուղիղ եւ կոր գիծերու. համաչափական փոքր գծագրումներ. ընդօրինակում գործածական պարզ առարկաներու: Փոքր վարժութիւններ բնականի վրայէն գծագրութեան:

8. ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղիղ նատելու, տեսրակ եւ գրիչ բռնելու, զանոնք մաքուր պահելու մասին ծանօթութիւններ:

Պարզ գիծեր, դէպի աջ շեղ եւ ուղիղ. նման մասեր ունեցող գրերու համախմբում. անոնցմով բառեր, իւրաքանչիւր տառի մասերը իրարու աւելի մօտիկ եւ տառերը իրարմէ հեռու գրելու վարժութիւն՝ դիւրընթեւնելի ըլլալու համար. գիրերը որչափ կարելի է պարզ ծեւերով ներկայացնել այնպէս որ տպագրին հետ մօտիկ նմանութիւն ունենան. ամբողջ այբուբէնը այսպէս սորվեցնելէ ետք, ընդօրինակութիւններ ընել տալ. կէտերու մասին

ծանօթութիւն։ պարզ մասերով գլխագիրեր եւ անոնց գործածութիւնը. վայելչագրութեան մասին տեղեկութիւններ. լատիներէն տառերով գրավարժութիւն նոյն սկզբունքներով։

9. ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Կաւով, խաւաքարտով, փայտով նախնական աշխատութիւններ։

10. ԶԵՌԱԳՈՐԾ ԵՒ ԿԱՐ

(Աղջկանց բաժնի յատուկ)

Քանըվայի վրայ թեթեւ աշխատութիւններ. երկաթ օղակներու վրայ ասեղով հիւսուածքներ. նոյն բաներով զանազան օգտակար առարկաներ (շղթայ, կողով, խոզանակի պահարան, եւլն.):

11. ԵՐԳ

Դպրոցական, ազգային եւ ժողովրդական երգեր՝ միաձայն եւ երկածայն։ Զայնագրութեան տարրական վարժութիւններ։

12. ՄԱՐՄՆԱՄԱՐՁ

Փոքրերու յատուկ Շուէտական մարմնամարզ. դէմքի, ուսերու, ձեռքի, մէջքի, սրունքներու, թոքերու եւ կուրծքի զարգացման եւ հասակի երկարումի համար թեթեւ շարժումներ. նստարաններու վրայ մարզանքներ (մանչերու յատուկ). սկառտական մարզանքներ. դպրոցական խաղեր. Առողջապահական տարրական ժամանակակից թագավորութիւններ. Ողիմապիական թեթեւ խաղեր. ֆութպող. պատքաղութեալ:

Բ. ԴԱՍԱՐԱՆ

1. ԿՐՈՆԲ ԵՒ ԲԱՐՈՅԱԼՈՍՈՒԹԻՒՆ

Նոր Ուխտի. — Յիսուսի կեանքը. Ծնունդէն մինչեւ Համբարձում. քանի մը կարեւոր հրաշքներ. Յիսուսի խօսած առակները:

2) Յիսուսի կեանքն, վարդապետութենէն քաղելով, ինչպէս նաեւ բարոյական ընթերցումներով եւ խրատներով, տղոց սորվեցնել իրենց հետեւեալ պարտականութիւնները.

ա) Տանը մէջ. — հնազանդութիւն, յարգանք, սէր եւ երախտագիտութիւն իրենց ծնողքներուն հանդէպ. փոխադարձ սէր, պաշտպանութիւն, բարի օրինակ՝ եղբայրներու եւ բոյլերու միջևւ. մարդասիրութիւն, բարութիւն՝ ծառաներու նկատմամբ:

բ) Քաղաքին մէջ. — բարեկրթութիւն, հնազանդութիւն օրէնքի եւ իշխանութեան, նպաստ հանրային օգտին, եւլն.:

գ) Դպրոցին մէջ. — կանոնապահութիւն, բարեկրթութիւն, յարգանք, յարատեւութիւն, աշխատասիրութիւն:

զ) Եկեղեցական երգերէն սորվիլ. — Փառք ի բարձունս, նորաստեղծեալ:

2. ՀՈՅԵՐԸՆՈՒԹԻՒՆ

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ —

Սահուն եւ անվարան ընթերցում, բացատրութեամբ եւ ամփոփումովը հատուածներու ընդհանուր իմաստին, եւ ծանօթացումովը դժուարին բառերու. բառագիտական վարժութիւններ հոմանիշներու եւ հականիշներու վրայ. Արտասանութիւն պարզ բանաստեղծութեանց. բերանացի արձակի վերածում նոյներուն, եւ վերաբաղրում պատմուածքներու:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. —

Բերանացի. — ընթերցանութեան հատուածներու վրայէն, ընդլայնուած ծանօթութիւններ գոյականի վրայ. տեսակ, թիւ, հոլով, պաշտօն (յատկացուցիչ, յատկացեալ), ածականներ, դերանուններու հակիրճ տեղեկութիւն բայերու վրայ :

ԳՐԱԿՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ.—

Արտագրութիւն կարդացուած հատուածին. պատրաստուած ուղղագրութիւն. յիշողութեամբ վերաբարձրում փոքր արտասանութեանց. շարադրում նախադասութեանց. փոքր խմբագրումներ՝ հարցումներու օժանդակութեամբ:

3. Ա. Ն Գ. Լ. Ե Բ. Է Ն Կ Ա. Մ Ֆ Բ Ա. Ն Ս Ե Բ. Է Ն

Խօսակցութեան վարժութիւն եւ առողանութիւն ուղիղ մեթոդով եւ ընտանի առարկաներու վրայէն: Ընթերցանութիւն. բացատրութիւն անզլերէնով կամ ֆրանսերէնով՝ հարցումներու միջոցաւ. բառագիտութիւն. անզլերէնէ կամ ֆրանսերէնէ ի հայ թարգմանութիւն. փոքր արտասանութիւններ. պատրաստուած ուղղագրութիւն: Քերականական ծանօթութիւններ գոյականի, ածականի, բայի շատ գործածական ժամանակներու մասին. խօսացկութեան միջոցաւ: Ծանօթ կենդանիներու կարգ մը շարժումներուն եւ յատկութիւններուն վերաբերմամբ հավերժ նախադասութիւններու կազմութիւն գրատախտակի վրայ:

4. Տ Ե Պ. Ա. Կ Ա. Ն Լ. Ե Զ. Ո Ւ

Վերեւի օտար լեզուին ծրագրով.

ԾԱՆՈԹ. — Օտար եւ տեղական լեզուներու բաժխումը կ'ըմբռացնի հետեւեալ կերպով.

Սուրիոյ մէջ աւանդել Արաբերէն եւ Ֆրանսերէն
Երազի „ „ „ եւ Անգլերէն
Յունաստանի մէջ „ Յունարէն եւ Ֆրանսերէն
Ֆրանսայի մէջ „ Ֆրանսերէն եւ Անգլերէն:

5. Թ Ո Ւ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ

1—1000 թիւերով չորս գործողութեան հաշիւներ, բերանացի եւ գրաւոր. միութիւնները եւ իրենց կարգը. թիւ մը 10ով, 100ով բազմապատկել. հասարակ կոտորակի ծանօթութիւն. կէս, երրորդ, չորրորդ եւն. տասնորդ, հարիւրորդ. տասնորդական թիւ մը 10 եւ 100 անգամ մեծցնել, պատիկցնել. մէթրի բազմապատիկ-

ները եւ ստորապատիկները. տեղական դրամներու վրայ բերանացի արագ հաշիւներ:

Երկրաչափական ծանօթութիւններ. — անկիւն, ուղղահայեաց, զուգահեռական, շրջանակ, եռանկիւն եւ իր տեսակները, քառանկիւն եւ իր տեսակները:

6. Ա. Զ. Գ. Պ Ա. Տ Ո Ւ Թ Ի Ւ

Աւանդական պատմութիւն. աշխարհագրական համառօտ ծանօթութիւն:

ՀԱՅԿԱ.ԶԱՆՑ ՇՐՋԱՆ. —

Հայկ եւ իր յաջորդները. Արամ Նահապետ եւ իր պատերազմները. Արայ զեղեցիկ եւ ծամիրամ. Արայէն մինչեւ Պարուց. Պարուց եւ իր յաջորդները. Տիգրան Երուանդեան եւ յաջորդները:

Ա.ՐԾԱԿՈՒՆԵԱԾ ՇՐՋԱՆ. —

Վաղարշակ. Արտաշէս Ա., Արտաշէս Աշխարհակալ. հայոց հեթանոսական կրօնը. Արգար, Անանուն եւ Սանատրուկ. ԵրուանդԲ., Արտաշէս Բ., Արտաւազդ. Մեծն Տիգրան. իր յաջորդները. Տըրդատ եւ Քրիստոնէութիւնը. Խոսրով Բ., Տիգրան. Արշակ Բ. եւ Մեծն Ներսէս. Պապ. Մերուժան Արծրունի. Մուշեղ Մամիկոնեան, Վարպաղատ. Հայաստանի բաժանումը 387ին. Վռամշապուհ եւ հայ գիրերու զիւտը. վերջին Արշակոնիք:

ՄԱՐԶՊԱՆԵՐ. —

Վարդանանց պատերազմը. Ղեւոնդեանց նահատակութիւնը. Վահան Մամիկոնեան. Գայլ Վահան:

7. Ա. Ը Խ. Ա. Բ Ա. Գ Բ Ո Ւ Թ Ի Ւ

ՀՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. —

Երկրագունոտը, իր մակերեսային պէսպիսութիւնը, ծովերը, մթնոլորտը, եւն.։ Կենդանական եւ բուսական թագաւորութիւններ. մարդը:

Ա.ՍԻԱ. —

Գլխաւոր գիծեր մակերեսի. լեռներ, գաշտեր, լեռնադաշտեր, ջրարբի եւ անջրդի երկրամասեր, անապատներ եւ մուսօններ: Զըրագրութիւն. ծովեր, մեծ գետեր, տելթաներ, ծովափունք եւ զըլխաւոր կղզիներ:

Ա.ԽԱ.ԽՈՐ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ. —

ԹՈՒՐԲԻԱ. եւ յառաջագոյն Ասիոյ ուրիշ երկիրներ. համառօտ: ԿՈՎԿԱ.Ը (ծանրանալ Հայաստանի վրայ), ԹՌՈՐՔԵԱՄԱՆ, Սիակերիա, Չինաստան, Ճարոն, Եւրոպական գլխաւոր գաղթավայրեր:

Ա.ՓՐԻԿԵ, իր դիրքը հասարակածի հետ յարաքերութեամբ: Լեռներ եւ լեռնադաշտեր. բաշխում զերմութեան եւ անձրեւներու, անապատներ. մեծ գետեր. մեծ լիճեր. կլիմայ:

Ա.ՓՐԻԿԵ, ԲՆԱԿԻՉՆԵՐԸ. ամփոփ ծանօթութիւն գլխաւոր պետութեանց եւ Եւրոպական կարեւոր գաղթավայրերու մասին:

8. ԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԵՐԵՔ ՎԻՃԱԿՆԵՐԸ. —

Ծանօթութիւններ օդի, ջուրի եւ այրումներու մասին. քանի մը պղտիկ փորձեր. յատկութիւններ կարգ մը գործածական մետաղներու:

ՄԱՐԴԸ

Ամփոփ նկարագրութիւն մարդկային մարմնի, եւ պաշտօն գլխաւոր գործարաններու: Առողջապահական գործնական վարժութիւններ:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՒ ԲՈՅՍԵՐ. —

Կենդանիներ եւ բոյսեր անմիջական շրջապատի: Պարտէզ եւ մրգաստան. մշակման ընդհանուր սկզբունքներ. մշակուած բոյսեր եւ անոնց մօտ յաճախող կենդանիներէն գլխաւորները: Շրջապատի օգտակար կամ վնասակար կենդանիներն ու բոյսերը:

9. ԳՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Նմոյշներու ընդօրինակութիւն. բնականին վրայէն գծագրում պարզ առարկաներու. յիշովութեամբ վերարտադրում նոյներուն. ազատ գծագրութիւն. պարտականութեանց պատկերազարդում:

10. ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարզ գիրերու վարժութեան համար, շարունակութիւն Ա. Դասարանի ծրագրին. հասարակ գլխագիրեր իրենց բոլոր ծեւելով շեղեղ եւ ուղղահայեաց զրելու փորձեր. հասարակ եւ գլխագիր շեղագիր. վերնագիրներ, անուններ, ասացուածներ զրելու վարժութիւն. շեղագրի տեղն ու գործածութիւնը: Նոյն ծրագիրը անգլերէն եւ ֆրանսերէն գրավարժութեան համար:

11. ԶԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

(Մանչերու յատուկ)

Կաւով, խաւաքարտով, փայտով, թիթեղով զանազան աշխատութիւններ:

12. ԶԵՐԱԳՐԸ ԵՒ ԿԱՐ

(Աղջկանց բաժնին յատուկ)

Քանըվայի միջոցաւ կտաւի վրայ խաչասեղով ծաղիկներ. պըռութիւն եւ քրօշէի վարժութիւններ. ուլունքներով օղակներու վարժութիւններ. բուրդի թելով հիւսուածքի փորձեր: Վարժութիւն պարզ կարի:

13. ԵՐԳ

Դպրոցական, ազգային եւ ժողովրդական երգեր. միաձայն եւ երկածայն: Տարերք ծայնագրութեան:

14. ՄԱՐՄՆԱՄԱՐՁ

Կը գործադրուի Ա. դասարանի ծրագիրը:

Գ. ԴԱՍԱՐԱՆ

1. ԿՐՈՆՔ ԵՒ ԲԱՐՈՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ա) Քրիստոնէական բարոյականի մայր գաղափարները.—Աստուծոյ հայրութիւնը, մարդոց եղբայրութիւնը, սիրոյ զգացումը, խղճի խաղաղութիւնը, ճշմարիտ երջանկութիւնը. քրիստոնէական հաւատքը՝ աղքիւր բարեգործական կեանքի:

բ) Յիսուս եւ Սբգար. Թաղէս եւ Բարթողիմէս առաքեալները, Սանդուխտ կոյս. Գրիգոր Լուսաւորիչ. Հովհափիմեանք. Որդիք եւ Թոռունք Լուսաւորչի. Ներսէս Պարթեւ:

գ) Բարոյական կրթութեան սատարող խօսակցութիւններ. մեծ մարդոց կենսազրութիւններ եւ ընթերցումներ. մասնաւորապար է. Տէ Ամիչիսի «Սիրոտ»էն:

դ) Նկեղեցական երգերէն գոց սորվիլ՝ Հաւատամք, Առաւոտ լուսոյ, Տարածեալ եւ Սրեւագալի շարականներ:

2. ՀԱՅԵՐԵՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.—

Արտայայտիք ընթերցում, որ ծգտի իմաստի ամբողջական ըմբռոնումէն զատ զգալ տալ նաև հատուածներու զեղեցկութիւնը. բերանացի վերլուծում զիսաւոր գաղափարներու. բառազիտական վարժութիւններ հոմանիշներու, հականիշներու, բառերու ընտանիքի, ածանցումներու եւ բարդութեանց վրայ: Արտասանութիւն ոտանաւոր եւ արձակ ընտիր կտորներու. բերանացի տեղեկատուութիւն ընթերցումի մը, դասի մը, պառյտի մը, եւլնի մասին:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—

Կանոնաւոր դասաւանդում բերականութեան բառազիտական մասին. — Ենթակայ, լրացուցիչներ, բացայայտիչ, բացայայտեալ: ԳՐԱՀԱՐ ՎԱՐԺԱՌԻԹԻԼԻՆՆԵՐ. —

Ուղղագրութիւն. արձակի վերածում. վոքք շարադրութիւններ՝ տրուած յատակագիծներու վրայ (նկարագրութիւն, պատմուածք, նամակ):

3. ԱՆԳԼԵՐԵՆ ԿԱՄ ՖՐԱՆՍԵՐԵՆ

Սահուն ընթերցանութիւն. բացատրութիւն՝ անգլիերէն կամ ֆրանսերէն հարցումներու միջոցաւ. թէ՛ տառական եւ թէ մաքուր թարգմանութիւն հայերէնի: Բառազիտութիւն եւ խօսելու վարժութիւն կարդացուած կտորին վրայէն. վոքք արտասանութիւններ: Քերականական աւելի լայն ծանօթութիւններ անունի, ածականի, գերանունի, բայերու ներգործական ծեւին, սահմանական եւ հրամայական եղանակներու մասին. գրաւոր թարգմանութիւն հայերէնէ անգլիերէն կամ ֆրանսերէն եւ փոխադարձաբար. վոքք շարադրութիւններ՝ հարցումներու միջոցաւ:

4. ՏԵՂԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Անգլերէնի կամ ֆրանսերէնի ծրագրով:

5. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բերանացի եւ գրաւոր թուարկութիւն. ամբողջական թիւերու վրայ չորս գործողութեան վերաբերեալ խնդիրներ. հասարակ եւ տասնորդական կոտորակներու վրայ պարզ խնդիրներ. մէթրին բազմապատիկները եւ ստորապատիկները. վերածում. լիդրին եւ կրամին բազմապատիկները. վերածում:

Քառակուսի մէթր. բազմապատիկ եւ ստորապատիկ. Եռանկիւններու եւ բառանկիւններու մակերեսներու չափում. աստիճան եւ ստորապատիկները. երկրաչափական մարմիններու վրայ պարզ ծանօթութիւններ:

6. ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԾԱՒԱՆՔԸ. —

Անցողակի ակնարկ մը ուրիշ երկիրներու մէջ Արաբներու նըւաճումներուն մասին. Արաբացիք ի Հայաստան. Թէոդորոս Ռըշտունի. Մուշեղ Մամիկոննեան. Համազասպ Մամիկոննեան. Ոստիկանները եւ անոնց վայրագութիւնները. Արաբ տիրապետութեան նըւագիրը:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՒԹՅ.—

Մագումը. թագաւորութիւնը. նկարագիրը. Աշոտ Ա., Սմբատ Ա., Աշոտ Երկաթ. Աբաս. բարգաւաճումի շրջան. Աշոտ ողորմած. Անի քաղաք. Սմբատ Բ., Գագիկ Ա., Յովհ. Սմբատ. Գագիկ Բ., անկում. Սելինգներու արշաւանքը:

ՀԱՅՈՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔՅ.—

Թագաւոր. նախարար. առանձնաշնորհումներ. բարքեր. ազատ-ներու զբաղումը. ռամիկները. շինականներ. բանակ. զէնքեր. ամ-րոցներ. պատերազմական արուեստը. հայ կինը. տօներ. հանդէս-ներ. կրթութիւն, եւն.:

ԿՐԵԿԵՑՆ ՀԱՅՈՍՏԱՆ.—

Սահման. հողագրութիւն. բնակչութիւն. հայ իշխանութիւն-ներ. Ռուբինեանց հարստութիւն. Ռուբէն Ա., Կոստանդին Ա., Խաչա-կրութիւնք. Թորոս Ա., Լեւոն Ա. եւ գերութիւնը. Թորոս Բ., Մլէհ. Ռուբէն Գ., Լեւոն Բ. Մեծագործ. իր քաղաքականութիւնը. Գ. Խաչակրութիւն եւ հայեր. Լեւոնի Փետութեան կազմը. պաշտօն-եաներ. դատարաններ. տուրքեր. մշակոյթ. Հեթում Ա., Լեւոն Գ., Հեթում Բ., ներքին վէճներ. Լեւոն Գ., Օշին. Լեւոն Ե., Լուսինեանք. Լեւոն Զ., վերջ անկախութեան. հայ վաճառականութիւնը կիլիկ-եան շրջանին:

7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Համառօտ ակնարկ մը նախապատմութեան վրայ. մարդկային ցեղեր եւ լեզուներ. բաղաքակրթութեան առաջին օրրաններ:

Եղիպատոս. Ասորեստան եւ Բաբելոն. Փիւնիկէ. Քետացիք. Եփրայեցիք. Մարաստան եւ Պարսկաստան:

8. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.—

Տարրական ծանօթութիւններ բեւեռներու, հասարակածի, երկ-րի գօտիներու մասին: Բաշխում ծովերու եւ ցամաքներու:

Ցամաքներ, լեռներ, լեռնագաշտեր, դաշտեր, հրաբուխներ, ծովեր, ծովախաղացքներ, հոսանքներ, եղերքներ, սառնարաններ, գետեր, լիճներ, հովեր, անձրեւ, բարեխառնութիւն: Մարդկային ցե-ղեր. վայրենի կեանք եւ բաղաքակիրթ կեանք:

ԱՄԵՐԻԿԱ.—

Բնական աշխարհագրութեան ծանօթութիւններ, վերեւի ընդ-հանուր աշխարհագրութեան ծանօթութեանց կարգով. քաղաքա-կան եւ տնտեսական աշխարհագրութիւն. ծանրանալ Գանատայի, կանական Միացեալ Նահանգներու, Մեքսիկայի, Պրազիլիոյ, Չիլիի եւ Արժան-թինի վրայ:

ՈՎԿԵՍՆԻԱ.—

Աւստրալիա, Նոր Զելանտա, Խաղաղականի գլխաւոր կղզիները:

9. ՏԱՐԵՐՔ ԲՆԱԿԱՆ ԵՒ ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Պարզ փորձեր եւ ամփոփ ծանօթութիւններ կշիռի, զերմաչա-փի, ծանրաչափի, կողմնացոյցի ուսումնասիրութեան համար: Մա-նօթութիւններ ելեկտրական հոսանքի ամէնէն գործածական կի-րառումներու մասին: Գործածական մետաղներ եւ աղեր:

Լրացուցիչ ծանօթութիւններ մարդուն մասին: Համառօտ զի-տելիք հիւանդութեանց պատճառներուն (մանրէներ, մակարոյծ-ներ) եւ շնչառութեան, մննդառութեան, հագուստի եւ բնակարանի առողջապահութեան վերաբերեալ:

Բուսական եւ կենդանական կեանքը բանջարանցին, արտին, մարգագետնին, այգին, անտառին եւ ջուրերուն մէջ:

10. ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

Սեւ կամ գունաւոր մատիտով բնականին վրայէն գծագրու-թիւն պարզ առարկաներու. յիշողութեամբ գծագրութիւն. պար-տականութեանց պատկերազարդում. զարդանկարի տարրական վարժութիւններ:

11. ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերատեսութիւն Բ. Դասարանի վարժութեանց. բոլորագիր-շեղագիր եւ անոր գլխագրերը. զրիչ բունելու ձեւեր՝ շեղագրի հա-



մար. գոթագիր, բոլորչի եւ քառանկիւն, անոր զլխագրերը, հայկական թէ երոպական ծեւերով. անոնց գործածութեան տեղը. հասարակ տպագրի եւ անոր զլխագիրերուն վարժութիւն: Նոյն ծրագիրը՝ Անգլերէն եւ Ֆրանսերէն զրավարժութեան համար:

12. ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

(Մանչերու յատուկ)

Կաւով, խաւարարով, փայտով, թիթեղով, երկաթ թելերով եւն. զանազան օգտակար առարկաներու պատրաստութիւն:

13. ԶԵՌԱԴՈՐԾ ԵՒ ԿԱՐ

(Աղջկանց բաժնի յատուկ)

Զանազան ծեւերով աժուռներ, պուօտէ, էթամին՝ դիւրին նըմոյշներու վրայ:

Ամէն տեսակ կարերու վարժութիւն. զանազան ծեւերով եւ միծութեամբ կարկտաններ դնել (քառակուսի, կլոր եւ եռանկիւն). զուլպայի բըփրիզ. օղակ. լամբակ շինել:

14. ԶԱՅՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԳ

Հնգագիծ, բանալիներ, խազ (նօթա), օժանդակ գիծ, խազերու երեք ձևեր՝ համահաւասար դադարներով. կէտ, պարզ չափեր, տրոհակ, ուժով եւ տկար ամանակներ. խազ երգել. կէս վեր, կէս վար, բնիկ:

Ազգային եւ օտար երգեր, միաձայն եւ բազմաձայն. գործիական երաժշտութիւն:

15. ՄԱՐՄՆԱԴԱՐՁ

Շուէտական մարմնամարզ. զլուխի, ուսերու, ծեռքերու, թոքերու եւ կուրծքի զարգացման եւ հասակի երկարումի համար աւելի բարդ շարժումներ. սրունքի, ոտքի, պառկելու փորձեր. նստարաններով մարզանքներ (մանչերու յատուկ). սկառւտական մարզանքներ, դպրոցական խաղեր, եւ գործադրութիւն առողջապահական կարգ մը սկզբունքներու. ողիմպիական թեթեւ խաղեր, ֆութպոլ, պասբէթպոլ, բուրգերու կազմութիւն եւ հեծելանիւ նստելու վարժութիւններ. պտոյտներ:

Պ. ՊԱՍՏԱՐԱՆ

1. ԿՐՕՆՔ ԵՒ ԲԱՐՈՑԱՆ ՕՍՈՒԹԻՒՆ

ա) Տամնաբանեայ պատուիրանները եւ անոնց կրօնական ու բարոյական նշանակութիւնը: Լերան քարոզը ամբողջութեամբ, իբրև խարիսխ քրիստոնէական հաւատքի:

բ) Էջմիածին իբրև կեղրոն ազգ. կրօնական իշխանութեան: Մահակ-Մեսրոպ, Թարգմանիչներու դերը Հայ եկեղեցւոյ կազմութեան եւ ազգին քրիստոնէական լուսաւորութեան տեսակէտով. զլխաւոր դէմքեր մեր եկեղեցական պատմութենէն. մասնաւորապէս ծանրանալ Գրիգոր Նարեկացիի, Ներսէս Շնորհալիի, Ներսէս Լամբրոնացիի, Յովհան Որոտնեցիի եւ Գրիգոր Տաթեւացիի վրայ:

գ) ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՈՆԵՐԸ.— Ծնունդ, Զատիկ, Հոգեզալուստ, Վարդապառ, Վերափոխումն Ս. Աստուածածնի, Խաչվերաց, Խաչի միւս տօները, Տեառներնդառաջ, Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ, Աւագ շաբաթ, Տօն Թարգմանչաց, Վարդանանց, Ղեւոնդեանց:

դ) ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈԽԵՐԱՊԵՏԻՒԹԻՒՆԸ.— Դպիր, սարկաւագ, քահանայ, վարդապետ, եպիսկոպոս, պատրիարք, կաթողիկոս:

ե) ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ, ԱՆՈԹՆԵՐ ԵՒ ԶԳԵՍՏՆԵՐ.— Աւետարան, Ճաշոց, Շարական, Տօնացոյց, Տաղարան, Ժամագիրք, Մաշթոց, Յայսմաւուրք, սկիհ, խաչ, բուրգառ, քշոց, եւլն. շուրջառ, թագ, վակաս, փորուրար, բազպան, եւլն.:

զ) Բարոյական կրթութեան սատարող խօսակցութիւններ եւ ընթերցումներ՝ ի մասին անհատական զլխաւոր առաքինութեանց եւ ընկերային կեանքի զլխաւոր պարտականութեանց. Ժուժկալութիւն, աշխատանքի սէր, անկեղծութիւն, համեստութիւն, արիութիւն, ներողամտութիւն, բարութիւն եւլն., եւ ընտանիքին ու ազգին հանդէպ պարտականութիւններ:

2. ՀԱՅԵՐԵՆ

ԲՈՅԱՏՐԵԱԼ. ԸՆԹԵՐՑՈՒԽՄ.— Կարդալ առողջանական եւ կէտաղրական օրէնքներու համաձայն, արտայայտել կտորին ընդհանուր ողին, թափանցել իմաստի երանգներուն, զգացում եւ հասկըցողութիւն դնել հատուածին մէջ: Բացատրութիւն իմաստներու, գրական ծեւերու եւ դարձուածքներու, բառերու (բառազննական ու քիչ անգամ նաեւ ստուգաբանական), ոճի հիմնական յատկութիւններու: արտասանութիւն ընտիր հատուածներու:

ՔԵՐՍԱԱՆՈՒԹԻՒՆ.— Վերատեսութիւն բառագիտութեան, համաձայնական ընդհ. օրէնքներ, քերականական լուծում:

ԳՐԱԴԱՐԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ.— Պատրաստուած ուղղագրութիւն, հակակշիռի ուղղագրութիւն, վերլուծում կարդացուած հատուածներու՝ իմաստի եւ ծեւի տեսակէտներէ, անոնց գրական գեղեցկութիւնը զգալ տալու առաջաղբութեամբ. այս վարժութիւնը մերթ կը կատարուի նաեւ բերանացի: Շարադրութիւններ՝ տղոց ներկայ կամ անցեալ միջավայրէն առնուած նիւթերու շուրջ. նամակագրութիւն:

3. Ա.ՆԳԼԵՐԵՆ

Ընթերցանութիւն. բացատրութիւն անգլերէնով. թարգմանութիւն. խօսակցութիւն օրուան դասին վրայէն. բառագիտութիւն. արտասանութիւն: Ամբողջական քերականութիւն համառօտ. բայերու ներգործական եւ կրաւրական ծեւերու սահմանական եւ հրամայական եղանակները: Ուղղագրութիւն. զրաւոր փոխադարձարգմանութիւն. շարադրում փոքր պատմուածքներու:

ԿԱ.Մ

4. ՖՐԱՆՍԵՐԵՆ

Սահուն ընթերցանութիւն. բացատրութիւն ֆրանսերէնով հարցումներու միջոցաւ. թէ՛ տառական եւ թէ մաքուր թարգմանութիւն հայերէնի: Բառագիտութիւն եւ խօսելու վարժութիւն՝ կարդացուած կտորին վրայէն. փոքր արտասանութիւններ: Քերակա-

նական ծանօթութիւններ անունի, ածականի, դերանունի եւ բայի մասին. խոնարհել բոլոր գործածական ժամանակները օժանդակ եւ առաջին լծորդութեան բայերուն ու սահմանականի ներկան, անցեալն ու ապառնին՝ միւս լծորդութեանց կանոնաւոր բայերուն: Ուղղագրութիւն. գրաւոր թարգմանութիւն հայերէնէ ֆրանսերէն եւ փոխադարձաբար. փոքր շարադրութիւններ՝ հարցումներու միջոցաւ:

5. ՏԵՂԱԿԱՆ ԼԵԶՈՒ

(Վերի օսար լեզուներու ծրագրով)

6. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ամբողջական եւ տանսնորդական թիւերով խնդիրներ լուծել. բաժանականութիւն. հասարակ կոտորակը տասնորդականի վերածել եւ փոխադարձաբար. երեքի կանոն, տոկոս, զեղչ, ապահովագրութիւն, մաքս, յանձնառողջէք, միջնորդչէք:

Երկրաչափական մարմիններու մակերեսները գտնելու վարժութիւններ եւ խնդիրներ. խորանարդ մէթրի ստորապատիկները. Երկրաչափական մարմիններու (ուղղահայեաց, զուգահեռական, գլան, կոն, բուրգ եւ գունդ) ծաւալները գտնելու վարժութիւններ եւ խընդիրներ: Ա-ին արժէքը գտնելու գործնական վարժութիւններ. գծագիտական վարժութիւններ՝ քանակով, կարկինով եւ ուղղաչափով:

7. Ա.Զ.Գ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԲԱԴՐԱՏՈՒԽԵԱՑ ԱՆԿՈՒՄԷՆ ՅԵՏՈՅ.— Սելմուգներ, Մելիք շահ, հայկական իշխանութեան մնացորդներ, թաթարներ, ձինկիզ Խան, Հայաստանի աւերումը, Օսմանցի թուրքերու երեւումը, Լէնկթիմուրի արշաւանքը, Հայաստան թաթարաշաւանքներէն յետոյ, Օսմանցիներու տիրապետութիւնը, Շահ Աբաս, Ղարաբաղի Մելիքները, Դաւիթ պէկ, հայ գաղթականութիւններ:

ՈՈՒՍԱՀԱՅԵՐ.— Հայոց յարաբերութիւնները Ռուսիոյ հետ.

Պարսկաստանի վիճակը Նատիր Շահէն վերջ. Մեծն Պետրոս, Խառայէլ Օրի, Կատարինէ Բ., Յ. Արդութեան, իր քաղաքական ծրագիրը, ուուսերը Կովկասի մէջ, 1803—1827ի Ռուս-Պարսիկ պատերազմները. հայոց դերը, Ներսէս Աշտարակեցի, հայոց յուսախաբութիւնները. Ռուս-Թուրք պատերազմը (1828), գաղթականութիւններ, Էջմիածին: Պոլոժէնիա, Մատթէոս և Գէորգ Դ. Կաթողիկոսները, Ժամանակակից անցքեր, մտաւոր շարժումը Ռուսահայոց մէջ:

ԹՐՅԱՀԱՅԵՐԸ.— Կ. Պոլոյ Պատրիարքութիւնը, Ամիրաններ, Հայ Կաթոլիկութիւնը, Միսիթարեանը, Յովհաննէս Կոլոտ, Աւետիք Պատրիարք, Հայ Բողոքականութիւնը, բարենորոգումի ծգտումներ Թուրքիոյ մէջ, Ազգ. Սահմանադրութիւն, Զէյթունի կոփիւնները, Խրիմեան և Վարժապետեան, հայկական խնդիր, Կոտորածներ, Կրթական շարժում, վերահաստատում Օսմ. Սահմանադրութեան, Բնդի. Պատերազմ:

8. ԲՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆՍՍՏԱՆ.— Նախնական Յունաստան, հերոսական Ժամանակներ, Տրովադայի պատերազմը, Դորէական արշաւանք. դիցաբանութիւն.— Սպարտա, Աթէնք, պարսկական պատերազմներ, Աթէնքի զօրութիւնը, Պէլոպոնէսի պատերազմը, Սպարտական, յետոյ Թեպական գերիշխանութիւն, Մակեդոնական գերիշխանութիւն, Մեծն Աղեքսանդր, յունական պատմութեան վերջին դարերը, քաղաքակրթութիւն:

ՀՄՈՄ.— Հռոմի հին պատմութիւնը, հանրապետութիւն, իտալական թերակղին տիրապետութիւնը, Աշխարհի տիրապետիւնը, քաղաքային խառնակութիւններ և հանրապետութեան անկումը, Կայսրութիւն՝ մինչեւ Դէոկլետիանոս, Դէոկլետիանոս և իր յաջորդները, հռոմէական քաղաքակրթութիւնը:

9. ԱՇԽԱՐՀ. ԳՐՈՒԹԻՒՆ

ԵԽՐՈՊԱ.— ԲնԱԿԱՆ ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, հող և մակերեւ-

սային անհարթութիւններ, կլիմայ, ջուրի հոսանքներ, ծովեր և ափունքներ, բաշխում կենդանական և բուսական տեսակներու, քաշխում ընակչութեան, ցեղեր և ազգութիւններ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ. Եև ՏՆՏԵՍՍԱԿԱՆ. ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.— Մասնաւորապէս կանգ առնել մեծ պետութեանց վրայ. 1918էն ի վեր ստեղծուած պետութիւնները խմբել Պալթիկեան պետութիւններ, Դանուբեան պետութիւններ, Պալբանեան պետութիւններ անուններու տակ: Հաղորդակցութեան մեծ նամբաններ, Եւրոպայի յարաբերութիւնները աշխարհի հետ:

10. ԲՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Կենդանաբանութիւն)

Ներկայացնել իւրաքանչիւր դասակարգէ մէյմէկ տիպարի կեանքը, անոր միջոցաւ ծանօթացնել դասակարգին ընդհանությատկանիշերը. մասնաւորաբար յիշել տնտեսական տեսակէտով դրական և բացասական նշանակութիւն ունեցող տեսակները. մատնանշել կենդանիներու յօրինուածութեան, անոնց միջավայրին եւ ապրելու եղանակին միջեւ զոյութիւն ունեցող յարաբերութիւնները. դասակարգութեան ընդհանուր պատկեր:

11. ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Բնականին վրայէն զծագրութիւն պարզ առարկաներու, կենդանական կամ բուսական նմոյշներու ուրուագիծներ. զարդանկարի վարժութիւններ. յիշողութեամբ զծագրում. պարտականութեանց պատկերազարդում:

12. ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Վայելչագրութեան մասին ծանօթութիւն. Կարճ կրկնութիւն նախորդ տարիներու մէջ ուսուցուած նիւթերու գլխաւոր մասերուն. զարդագիրեր, անոնց զանազան տեսակները: Անգլերէն եւ ֆրանսերէն գրավարժութիւն՝ նոյն ծրագրով:

13. ԶԱՅՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԳ

Կշիռ. 1/8 եւ 1/16րդներ համահաւասար դադարներով. պատահական եւ տեւական փոփոխութիւններ. 3/3 մէկ ամանակ (թրիոլէ), բարդ չափեր. կապ. ծայնամիջոցներ. խազ կարդալ եւ խազերգել՝ բարդ չափերով. ծայնի թուիչքներ զանազան հեռաւորութեամբ. վարժութիւններ ուսուցչին ըսածը գրելու:

Ազգային եւ օտար երգեր, միաձայն եւ բազմաձայն. գործիական երաժշտութիւն:

14. ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

(Մանչերու բաժին)

Նախորդ տարուան ծրագիրը աւելի ընդլայնելով:

15. ԶԵՌԱԳՈՐԾ, ԿԱՐ ԵՒ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Աղջկանց բաժնի յատուկ)

Պուտէ, լեցուն եւ ծակուած (ուլցիլիէօ), Փիլէ (ցանց), թրիքօ, քրօշէ, ժանեակներ, մետաքսի վրայ զանազան ասեղնազործութիւններ:

Չեւագիտական վարժութիւններ ճերմակեղէններու եւ անոնց համար հարկ եղած ամէն տեսակ կարեր. կարկտուք. ճերմակեղէնի եւ գուլպայի ըլքիրիզ. օդակ եւ լամբակ շինել:

16. ՄԱՐՄՆԱՄԱՐՁ

Կը գործադրուի Գ. դասարանի ծրագիրը:

Ե. ԴԱՍԱՐԱՆ

1. ԿՐՈՆՔ ԵՒ ԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ա) ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ.— Նիկիոյ, Կ. Պոլսոյ եւ Եփեսոսի:

բ) ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐՋԻՆ ՆՇԱՆԱԽՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ.— Մովսէս Տաթեւացի, Սիմէոն Երեւանցի, Ներսէս Աշտարակեցի, Գէորգ Գ. Պոլսեցի, Մակար Թեղուտացի, Խրիմեան Հայրիկ, Մատթէոս Իզմիրլեան, Կաթողիկոսութիւն Կիլիկիոյ, Կաթողիկոսութիւն Աղթամարայ, Պատրիարքութիւն Երուսաղէմի, Պատրիարքութիւն Կ. Պոլսոյ, Պոլսոյ վերջին նշանաւոր պատրիարքները — Յովհաննէս Կոլոս, Յակոբ Նալեան, Ներսէս Վարժապետեան, Օրմանեան, եւլն.:

գ) ՆՇԱՆԱԽՈՐ ՀԱՅ ՎԱՆՔԵՐ.— Տաթեւու վանք, Մշոյ Ս. Կարապետի, Երուսաղէմի Ս. Յակոբայ, Վանայ Վարագայ վանք, Յաղէջի Ամրառու, Կեսարիոյ Ս. Կարապետի, Սերաստիոյ Ս. Նշանայ վանք, Սրմաշու դպրեվանք, Գաղատիոյ Կարմիր վանք, Հաղբատ, Վենետիկ, Վիեննա, Զմմառ:

դ) ԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԹԻՒՆ.— Խղճմտանք եւ նկարագիր. ինքնակրթութիւն. արդարութեան եւ համերաշխութեան զանազան ձեւերը. քաղաքացիական կրթութեան ծանօթութիւններ. գաղափար. մը մեր բնակած երկրին եւ մեր հայրենիքին քաղաքական, վարչական, դատական կազմակերպութեանց մասին. քաղաքացին, իր պարտականութիւններն ու իրաւունքները:

2. ՀԱՅԵՐԵՆ

ԱՇԽԱՏՀԱՐՄԱՐ.—

ԲԱՑԱՏՐԵԱԼ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻԾ հայ զրականութեան կրկին հատուածներէն ընտրուած եւ միշտ զրական արժէք

ունեցող կտորներու: Բացատրութիւն խորքի եւ ծեւի. գտնել հասուածին հիմնական գաղափարը, երկրորդական գաղափարները. հանել անոր յատակազիծը: ծանրանալ ծեւին, ոճին մասնայատկութիւններուն վրայ: Մատենազրական ծանօթութիւններ. գրական գլխաւոր սեռերու շուրջ տեղեկութիւններ: Ոտանաւորներու ուսումն ի բերան. արտայայտիչ արտասանութիւններ:

ԳՐԱՀՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ. — Վերլուծում հասուածին պարունակած զանազան հարցերուն, որոնք կրնան ըլլալ. —

ա) Եեզուական (գրաբարի եւ աշխարհաբարի խառնուրդ, գըրաբարի ազդեցութիւն, պատմական շրջանակներ, եւլն.):

բ) Գրական (դպրոցներ, սեռեր, ասոնց բարեշրջումը՝ մեր գըրականութեան մէջ ամփոփ զիծերով. կենսազրութիւններ ու փոքր համագրութիւններ դէմքերու եւ շրջաններու):

գ) Գաղափարազրական (գաղափարներու զննութիւն. շրջապատ. ազդեցութիւններ):

Վերլուծումի այս աշխատութիւնները կրնան մերթ կատարուիլ նաեւ բերանացի:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ. — 1) անծնական ապրումներ. նօթեր. յուշագրութիւններ. զիտական նիւթերու շուրջ բացատրուած ծրագրով խմբագրումներ: 2) գրական կտորներու վրայ՝ տրուած ծրագրով՝ քննախօսութիւններ (dissertation):

ԳՐԱԲԱՐ. —

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ Աւետարանէն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Բառագիտութիւն. 8 մասունք բանի. ծեւախօսութիւն. համածայնութեան գործածական օրէնքներ ընթերցման կտորէն առնուած. քերականական լուծում:

3. ԱՆԳԼԵՐԵՆ

Ընթերցանութիւն. բացատրութիւն անգլերէնով. թարգմանութիւն. խօսակցութիւն օրուան դասէն առնուած կամ անկէ դուրս նիւթերու վրայ. բառագիտութիւն. արտասանութիւն: Ամբողջական քերականութիւն. անկանոն բայեր, լուծում: Ուղղագրութիւն:

Գրաւոր փոխադարձ թարգմանութիւն. շարադրութիւն պատմուածքներու, նամակներու կամ դասարանին մէջ մշակուած ուրիշնիւթերու:

ԿԱՄ

4. ՖՐԱՆՍԵՐԵՆ

ՀԱՅԹԵՐԳԱՆՈՒԹԻՒՆ. բացատրութիւն ֆրանսերէնով. թարգմանութիւն. խօսակցութիւն օրուան դասէն վրայէն. բառագիտութիւն. արտասանութիւն: Ամբողջական քերականութիւն համառօտ. խոնարհում կանոնաւոր եւ անկանոն բայերու՝ հաստատականժխտական, դերանուանական ծեւերու տակ: Ուղղագրութիւն: Գըրաւոր փոխադարձ թարգմանութիւն. փոքր շարադրութիւններ առարկաներու դէմյանդիմանական նկարազրութեամբ եւ պատմուածքներու:

5. ՏԵՂԱԿՈՆ ԼԵԶՈՒ

Վերի օսար լեզուներու ծրագրով

6. ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — Հին ազգերու գրաւոր թուարկութիւնը. ամբողջական եւ տասնորդական թիւերու չորս գործողութեան վերաբերեալ խնդիրներ. բաժանականութիւն, նախնական թիւեր, փոքրագոյն հասարակ բազմապատիկ. մեծագոյն հասարակ բաժանարար. հասարակ կոտորակ. կոտորակներու բաղդատութիւն. հասարակ կոտորակի չորս գործողութեան վերաբերեալ խընդիրներ, կարողութիւն եւ արմատ:

ԵՐԿՐՈՋԱՓՈՒԹԻՒՆ. — Նախորդ տարուան ծրագիրը աւելի ընդլայնուած. համեմատական զիծեր, նման եւանկիւններ եւ բազմանկիւններ, շէնքի մը բարձրութիւնը գտնելու գործնական վարժութիւններ, անդաշափութեան նախնական ծանօթութիւններ:

7. Ա.Զ.Դ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.— Նայիրի-Ռւրաբտեան քաղաքակըրպութենէն մինչեւ Քրիստոնէութիւն:

8. Բ.Ն.Դ.Հ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԻԶԻՆ ԴԱՐ.— Բարբարոսներու արշաւանքները. նոր թագաւորութիւններ. Բիւզանդիոն. Մահմետականութիւն. պապականութիւն. Մեծն Կարուսի Կայսրութիւնը. Խաչակրութիւնը. Աւատականութիւն. Միջնադարեան կարգեր եւ բարբեր. Գերմանիա. Ֆըրանսա. Անգլիա միջին դարուն (ԺԲ.—ԺԵ. դար):

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.— Թուրքերը Կ. Պոլսոյ մէջ. Ծովային մեծ զիւտեր, գաղթային առաջին կայսրութիւններ. Վերածնունդ. Վերաբրոգութիւն. Խոտալական պատերազմներ, կրօնական պատերազմներ արեւմտեան Եւրոպայի մէջ, հետեւանքներ. Վեստֆալիոյ հաշտութիւնը. Ոիշըլիէօ. Մազարէն. Լուդովիկոս Ժ.Դ., Անգլիական յեղափոխութիւնը, զինակցութիւն Ֆրանսայի դէմ (1683—1714). Գրականութիւն եւ գիտութիւն 17րդ դարուն. Ռուսիա. Բրուսիա. Անգլիա. Ֆրանսա. Միացեալ Նահանգներ. Բոլոնիա. Թուրքիա 18րդ դարուն: Մտքերու վիճակը 18րդ դարուն եւ Գրանսական յեղափոխութեան նախանշանները:

9. Ա.Շ.Խ.Ա. Դ. Դ. Պ. ՈՒ. Թ. Ի. Ւ. Ի. Ւ.

ՀԱՅԱՍՏԱՆ.— Պատմական Հայաստան, ըստ Խորենացիի աշխարհագրութեան.— Հայաստանի Հանրապետութիւն.— Քնական աշխարհագրութիւն. քաղաքական աշխարհագրութիւն. մարդկային աշխարհագրութիւն. (ընակչութիւն. խտութիւն. ծնունդ. մահացումներ. ներգաղթ. արտագաղթ). տնտեսական կեանք (Երկրագործութիւն. ճարտարարուեստ. հաղորդակցութեան միջոցներ. վաճառականութիւն, եւլն.).— Հայկական նահանգներ Թուրքիոյ (Վան. Բաղէշ. Կարին. Խարբերդ. Տիգրանակերտ. Սեբաստիա. Կիլիկիա):— Հին եւ նոր հայ գաղութներ:

10. Բ.Ն.Ա.ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲՈւՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տիպարներու վրայէ ծանօթացնել իւրաքանչիւր ընտանիքի յատկանիշերը. Ուսումնասիրել գործարաններու պաշտօնը եւ, արտաքին ծեւաբանական տեսակէտով, բոյսին ու միջավայրին միջեւ գտնուող յարաբերութիւնները. ծանրանալ տնտեսական, առանին ու բժշկական տեսակէտով կարեւորութիւն ունեցող բոյսերու վըրայ: — Դասակարգութեանց ընդհանուր պատկեր, — բոյսերը ճանչցնելու վարժութիւններ:

11. Գ.Ծ.Ա.Գ.ՐՈՒԹԻՒՆ

Շարունակութիւն եւ ընդլայնում Դ. դասարանի ծրագրին,— հեռապատկերի գաղափար, — դասարանէն դորս գծագրում մատիտով, բասդելով, ջրաներկով:

12. Զ.Ա.Ց.Ն.Ա.Դ. Պ. ՈՒ. Թ. Ի. Ւ.

Զայնաշարերու պատրաստութիւն. — Փոքր երկեակ, մեծ երկեակ. — Փոքր եռեակ, մեծ եռեակ, եւլն. — մեծ ձայնաշար, փոքր ձայնաշար. մեծի եւ փոքրի յարաբերութիւնները. Ա. կարգի կամ լաւ աստիճաններ, ձայնաշարներու տեսակէտէ. խազերգել ուեւէ ձայնէ սկսելով մեծ եւ փոքր երկեակ, մեծ եւ փոքր եռեակ, եւլն. Ֆա.ի բանալիի գործածութիւն:

Զարդախազեր, յապաղիկ, նախախազ (պլոտըրի, նօթ տը քասաժ) — Ազգային եւ օտար երգեր, միաձայն եւ բազմաձայն. — գործիական երաժշտութիւն:

13. Զ.Ե.Ռ.Ա.Կ.Ա.Ն. Ա.Շ.Խ.Ա. Ս.ՈՒ. Թ. Ի. Ւ.

(մանչեր)

Կը գործադրուի Դ. դասարանի ծրագիրը:

Զ. ԳԱՍՏԱՆ

14. ԶԵՌԱԳՈՅԾ, ԿԱՐԵՒ ԶԵՒԱԳԻՑՈՒԹԻՒՆ

(Աղջկանց բաժնի յատուկ)

Նուրք աժուռախառն պոօտէներ ճերմակեղէններու, գունա-
ւոր պոօտէներ հաստ կտաւի վրայ, ֆլէշի ամբողջական աշխա-
տութիւններ:

Չեւել եւ կարել ճերմակեղէններ, զոգնոցներ, ներքնազգեստ-
ներ, մեքենայով կարի վարժութիւններ, ճերմակեղէնի եւ գուլպայի-
րքիրիզ, օղակի եւ լամբակի շինութիւն:

15. ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Շուէտական մարմնամարզ՝ չափահասներու յատուկ. դէմքի,
ուսերու, ծեռքի, թոքերու եւ կուրծքի զարգացման, ու հասակի եր-
կարումի շարժումներ, մէջքի, սրունքի, ոտքի. զանազան ծեռերով՝
պառկելու եւ նստարաններով ու գաւազաններով մարզանիքներ,—
Սկառուտական մարզաններ.—առողջապահական սկզբունքներու եւ
մըցումի ծանօթութիւններ եւ գործադրութիւն, Ողիմպիական խա-
ղեր, փութպոլ, պասբէթպոլ, բուրգերու կազմութիւն, հեծելանիւ-
նստելու վարժութիւն, պտոյտներ, ըմբշական մարզանքներ, գոր-
ծիքներու վրայ փորձեր:

1. ԿՐՕՆՔ ԵՒ ԲԱՐՈՅՑԱԳԻՑՈՒԹԻՒՆ

ա) Հայ եկեղեցին դաւանութիւնն ու խորհուրդները:
բ) ՍՈՒՐԲ ԳԻՐԲ.—Հին Կտակարանի գիրքերը. պատմական, մար-
գարէական, կրօնաբանաստեղծական եւ վարդապետական գիրքեր.
ասոնց զլսաւորներուն պարունակութիւնը եւ գրութեան ժամանա-
կը: Նոր կտակարանի գիրքեր.—Աւետարաններ, Գործք Առաքելոց,
Թուղթեր, Յայտնութիւն. Խւրաքանչերին բովանդակութիւնը, հե-
ղինակը, ժամանակը:

գ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԿԱՆ ԵԿԵՂԵՑ-
ԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆՔՆ.— Առաքեալներ, առաջին եկեղեցին. հալա-
ծանքը եւ իր պատճառները, վկաններ, աղանդներ, վանականու-
թիւն, խաչակըութիւն: Եկեղեցիներու բաժանումը — Հռոմէական,
Յոյն, Բողոքական եկեղեցիներ, Արեւելեան եւ հին եկեղեցիներ: Հայ
եկեղեցւոյ տարբերութիւնը քոյր եկեղեցիներէն:

դ) ՀԱՐՄԱՆՕՏ ԾՈՆՈԹՈՒԹԻՒՆ Մոլսիսականութեան, խալամու-
թեան, պուտայականութեան եւ կուապաշտութեան վրայ:

ե) ՀԱՐՄԱՆՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ հայոց հին հեթանոսական
կրօնքէն:

զ) ԲԱՐՈՅՑԱԳԻՑՈՒԹԻՒՆ (առանձին դասապահով)
Ներածութիւն.— Մարդուն գերազանցութիւնը կենդանիին վրայ,
բանականութիւն, բարի կամեցողութիւն, ուղիղ դիտաւորութիւն
եւ արդար գործ:

1.— ԱՆՀԱՏՈՆԿԱՆ ԿԵԱՆՔ

Մարդուն պարտականութիւնները իր անձին նկատմամբ, ա-
ռողջապահութիւն եւ ֆիզիքական կրթութիւն: — Զգացողութեան
մշակում, ժուժկալութիւն, ազնիւ հաճոյքներու հետապնդում,
քաջութիւն եւ իր զանազան ծեռերը, աշխատանքի սէր, ճշմար-

տութեան սէր, անկեղծութիւն, համեստութիւն, ինքնաճանաչութիւն, ինքնավարութիւն, նկարագրի տոկունութիւն, բարոյականարժանաւորութիւն:

2.— ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Ընտանիքը.— իր բարիքները, պարտականութիւններ ծնողներու հանդէպ, փոխադարձ պարտականութիւններ տղոց. ընտանիքը մը հիմնելու պարտականութիւնը:

Դպրոցը.— Պարտականութիւններ ուսուցիչներու հանդէպ, դասընկեր եւ բարեկամ, յարգանք կանոնին, պարտականութիւններ ընկերներու հանդէպ:

Ասպարէզի մը ընտրութիւնը, արհեստաւորի խղճմտութիւն:

Ընկերութիւնը.— Ուղղամտութիւն, յարգանք յանձնառութեանց, յարգանք ուրիշներու իրաւունքին, քաղաքավարութիւն, քարութիւն, կարեկցութիւն, վեհանձնութիւն, արդարութիւն, համերաշութիւն, ընկերային գործին նպաստելու պարտք: Եզրակացութիւն:

2. ՀԱՅԵՐ ԷՆ

Ա.) ԱՇԽԱՐՀԱԲԱՐ.—

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ.— Վերլուծում հայ գրականութեան կրկինհատուածներէն ընտրուած յատկանշական կտորներու (երբեմազգրական սեռերու ըմբռնումին համար՝ ամբողջական գործի մը): Ծանրանալ հեղինակներու դիմագծութիւնը յօրինող տարրերունվրայ, երեւան բերել օտար կամ փոխադարձ ազդեցութիւններ: Գրական սեռերու ընդհանուր գիտելիքներ: Գրական խմբաւորումներ: Ակնարկ մը մեր նոր գրականութիւնը լեցնող հոսանքներունվրայ: Գրաւոր վերլուծումներ, դասերէ դուրս, նախասիրուած հեղինակներէ:

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԸ.— Իր պատմութիւնն ու շրջափոխութիւնը ամփոփ կերպով:

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ.— Իր ուսումնասիրութիւնը պատ-

մական ու քննադատական երեսներով, ժամանակագրական փոքրկապ մը՝ զետեղելու համար անձերը եւ զործերը իրենց շրջաններուն մէջ: Ծանրանալ յատկանշական հեղինակներու վրայ: Գլխաւոր գիրքերը մեր նոր գրականութեան:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ — Գրական քննախօսութիւններ զիրքերու, դէմքերու եւ երեւոյթներու վրայ, տղոց կեանքին հետ կապ ունեցող նիւթերէն, անոնց զանազան դասերէն, անձնական ապրումներէն պատիկ համադրութիւններ: Պատմել եւ դատել սորվիլ:

Բ) ԳՐԱԲԱՐԸ

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ.— Զանազան մատենագիրներ եւ մասնաւորաբար հինգերորդ դարու հեղինակներ:

ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ.— Ամփոփ պատմութիւնը:

ՔԵՐԱԿՈՆՈՒԹԻՒՆ.— Զամածայնական օրէնքներ, շարունակութիւն նախորդ տարիէն. ընթերցումներէ հանուած բերականական մատնայատկութիւններ եւ ոճեր:

3. Ա.Ն ԳԼԵՐ ԷՆ

Բացատրեալ ընթերցում հատընտիր կտորներու, թարգմանութիւն, խօսակցութիւն, բառագիտութիւն, արտասանութիւն. վերատեսութիւն եւ ընդլայնում ամբողջական քերականութեան. քերականական եւ տրամաբանական լուծում, անգլերէն ոճեր եւ յատկաբանութիւններ, ուղղագրութիւն, գրաւոր փոխադարձ թարգմանութիւն, տրուած յատկագծով եւ կամ ազատ շարադրութիւններ:

ԿԱՄ

4. ՖՐԱՆՍԵՐ ԷՆ

Բացատրեալ ընթերցում, թարգմանութիւն, խօսակցութիւն, բառագիտութիւն, արտասանութիւն, վերատեսութիւն քերականութեան, մատնայատկութիւն կանոնաւոր եւ անկանոն բայերու-

համաձայնութեան գլխաւոր կանոններ, լուծում: Ուղղագրութիւն,
գրաւոր փոխադարձ թարգմանութիւն, տրուած յատակագծով եւ
կամ ազատ շարադրութիւններ:

5. ՏԵՂԱԿԱՆ ԼԵԶՈՒ

(Վերի օսար լեզուներու ծրագրով)

6. ՈՒՍՈՂ ՈՒԹԻՒՆ

ԹՈՒԾԲԱՆՈՒԹԻՒՆ.— Ազգերէ ոմանց ոչ-մեթրական չափերուն վրայ ծանօթութիւններ, խառն թիւեր, համեմատութիւն, կշիռ, ուղիղ եւ խոտոր համեմատութիւն, պարզ եւ բաղադրեալ երեքի կանոն, պարզ եւ բաղադրեալ տոկոս, առեւտրական եւ արմատական զեղչ, հասարակաց եւ միջին վճարօր, խառնուրդ եւ մետաղներու բաղադրութիւն:

ԵՐԿՐԱՋԱՓՈՒԹԻՒՆ (տեսական).— Մակարդակի երկրաչափութիւն, տեսութիւններու ապացուցմամբ եւ խնդիրներով:

ԳՐԱՀԱՇՈՒԽԻ. — Գրահաշուական քանակութիւններ, բազմեզրի մը թուական արժէքը գտնել, միեզըներու եւ բազմեզըներու չորս գործողութիւն, արտադրիչ, հասարակ կոտորակներու չորս գործողութիւն, մէկ անծանօթով Ա. աստիճանի հաւասարութեան խընդիրներ: Մէկ անծանօթով Ա. աստիճանի անհաւասարութիւն, արմատականով հաւասարութիւններ, Ա. աստիճանի բազմաթիւ անծանօթով հաւասարութիւններ եւ խնդիրներ:

7. ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՔՆՆՍԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.— (շար. եւ վերջ).— Քրիստոնէութիւններ մինչեւ մեր օրերը:

8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.—

ՅՐԱՆՍՍՈԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.— Հին վարչածեւ, անկում բացարձակ միապետութեան, անկում թագաւորութեան, հանրապետութիւն, պայքարը հանրապետութեան ու Եւրոպայի միջեւ, հիւպատոսութիւն, կայսրութիւն, Նարոյչոնի արտաքին քաղաքականութիւնը, Վիէննայի համաժողովը, Սրբազն Զինակցութիւնը, վերահաստատում թագաւորութեան, 1848ի յեղափոխութիւնը, երկրորդ հանրապետութիւն, երկրորդ կայսրութիւն:

Խոտական միութիւն, գերմանական միութիւն.— 1870-ի ֆրանք եւ գերման պատերազմ: Սրեւելեան խնդիրը 19րդ դարուն, Պալքանեան նոր պետութիւններ: Կերպարանավոխութիւն ճարտարարուեստի եւ վաճառականութեան: Ծաւալական քաղաքականութիւն Եւրոպայի, եւ կազմութիւն գաղթային կայսրութեանց: Ծայրագոյն Սրեւելը, Անգլիա, Գերմանիա, ԱւստրօՀունգարիա, Ռուսիա, Միացեալ Նահանգներ, Ֆրանսա 19րդ դարուն: Բնդիանուր նկարագիր ժամանակակից քաղաքակրթութեան: — զինակցութիւններ, զինեալ խաղաղութիւն, քաղաքական ազատութիւններ, ռամկավարութիւն. ընկերային վարդապետութիւններ. Մեծ Պատերազմ, հետեւանքները. աշխարհի քաղաքական ներկայ վիճակը:

9. ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ.— Հարստութեան ազդակներ. — Փիզիքական ազդակներ, տարածութիւն, հողի բնոյթ, կլիմայ: Աշխարհագրական դիրք եւ կերպարաններ: — Բնական աղբիւրներ, հանքային, երկրագործական եւ ճարտարարուեստական արտադրութիւններ: — Տնտեսական պայմաններ, մեծ հողամասեր, վաճառականութիւն. մեծ նաւահանգիստներ, մեծ քաղաքներ. Լոնտոն: Մարդկային եւ քաղաքական ազգակներ. անգլիացի ժողովուրդը, իր կառավարութիւնը, գաղթային կայսրութիւնը: Միեւնոյն ծրագրով ուսումնասիրել Եւրոպական բոլոր մեծ

պետութիւնները, տիպար քանի մը փոքր պետութիւններ (Զուիցեռիա, Պելճիգա), Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Ճարոն: Մեծ ջրանցքներ, Սուէզ, Բանամա.— Երկաթուղիի մեծ զիժեր.— Մարդկացին մեծ հոսանքներ, արտագաղթի ուղղութիւններ, գաղթավայրերու շահագործում:

10. Բ Ն Ա Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Երկրաբանութիւն (Առաջին կիսամեայ)

Ամփոփ ծանօթութիւն ամենահասարակ ժայռերու մասին, ինչնց ծագումի այլազանութեան ցուցումով: Երկրաբանական ներկայ երեւոյթներ.— Զորին ներգործութիւնը իր տարբեր ծեւերուն տակ.— Մթնոլորտի ներգործութիւնը.— հրաբուխ, երկրաշարժ:

Ծանօթութիւն երկրաբանական դարաշրջաններու իրերայտագործութեան մասին:— Մեծ խմբումներ իւրաքանչիւր շրջանի յատկանշական բրածոներու, կենդանիներու եւ բոյսերու: — Աստիճանական կերպարանափոխում երկրի մակերեսին: Կազմութիւն լինաշղթաներու:

Բնախօսութիւն (Երկրորդ կիսամեայ)

Ամփոփ համեմատական կազմախօսութիւն եւ բնախօսութիւն բոյսերու, կենդանիներու եւ մասնաւորաբար մարդուն: Առողջապահութեան հիմնական սկզբունքներ:

11. Բ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Նիւթի զանազան վիճակներ.— փորձառական ծանօթութիւն ուժի, աշխատանքի եւ զօրութեան.— աշխատանքի պահպանման սկզբունք, լծակ, եւլն.:

Ծանրութիւն. — Ծանրութիւն, ուղղահայեց, ծանրութեան կեղրոն, կշիռ.— տեսակարար ծանրութիւն հաստատուններու եւ հեղուկներու:

Հեղուկներու եւ ԿԱԶԵՐՈՒ ՀԱԽԱՍԱՐԱԿՇՈՒՐԻԹԻՒՆ.— Ճընշումի միութիւն, Բաքալի սկզբունք, կիրառումներ, օրի-

նակներ.— մթնոլորտային ճնշում, ծանրաչափ, Արքիմեդէսի ըստ կզբունք: Կիրառում տեսակարար ծանրութեանց չափումն:— ծըստ փուն մարմիններ:

Հիմնական ծանօթութիւններ Զերմութեան, Զայնի, Լոյսի եւ Ելեկտրականութեան մասին:

12. Տ Ա Ր Ր Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Օդ, բորակածին, ջուր, թթուածին եւ ջրածին, ջուրի բաղադրութիւնը.— Թթուներու, աղերու եւ խարիսխներու (պազ) մասին ընդհանուր ծանօթութիւններ՝ օրինակներով եւ կիրառումներով: Տարրալուծութիւն, համադրութիւն եւ խառնուրդ: — Պարզ մարմիններ, մետաղակերպներ եւ մետաղներ, բաղադրեալ մարմիններ: — Խորհրդանիշ եւ տարագ: — Բնածուխ եւ իր կազերը:

13. Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

ԳԱՂԱԲ ԱՅԻ ԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՂԱԲԱՑԻՆ

Ի Բ Ա Ի Ո Ւ Թ Ի

Ա. — Ազգ, Հայրենիք, Պետութիւն, կառավարութիւն, ազգային վեհապետութիւն. — հանրային իշխանութիւնք, իշխանութեանց բաժանում եւ կազմակերպութիւն: Քաղաքացիական պարտաւորութիւնք: — Հայ Ազգային Սահմանադրութիւն:

Բ. Անձեր, (բերոսն). — քաղաքային վիճակ, ընտանիքի կազմութիւն, ամուսնալուծում, հայրական իշխանութիւն, անկարողներ:

Ինչքեր. — շարժուն եւ անշարժ ինչքեր, սեփականութեան իրաւունք, սեփականութեան անդամատումներ:

Պայմանագրութիւնք եւ պարտաւորութիւնք, առանձնաշնորհում եւ հաստատագրաւ. քաղաքային պատախանատուութիւն, ժառանգութիւն, նուիրատուութիւն, կտակ:

14. ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ.— Վաճառականութիւն, սովորական եւ իրաւագիտական տեսակէտներով.— վաճառականներ (գործարանատէր, մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառականներ, սեղանաւորներ, յանձնակատար, միջնորդ, ապահովագրող, եւլն.).— Գնում եւ վաճառում, ուղղակի եւ անուղղակի. կանխիկ եւ ապառիկ. սուացազիր.— ներքին եւ արտաքին վաճառականութիւն (վերջինին մէջ ներածում եւ արտածում, թրանզիթ).— վաճառք, անոր կշիռ, գինը, փոխադրութիւնը (ծովային, ցամաքային եւ օդային). հաշուեցոյց, փոխադրագիր, մաքսային դրութիւն, մաքսատուրք մնանկութիւն (պարզ, յանցաւոր եւ խարդախ) եւ անոր բարոյական, օրինական եւ քաղաքային զնամները.— փոխանակազիր եւ օրինական տրամադրութիւններ.— հրամանի եւ բնակարանի մուրհակ, մերժում, բողոքում:

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ.— Պարտաւորիչ եւ օժանդակ տեսրակներ.— հաշուեզգլուխներ.— պարզ տոմար, ծեռատետր. Օրհաշիւ եւ Մայր հաշիւ. պարզ տոմարի անպատեհութիւնները.— Կրկնատոմար. Զեռատետր. Օրհաշիւ եւ Մայր հաշիւ. Կրկնատոմարի առաւելութիւնները:

Ամէն նիւթի հետ կապուած պիտի ըլլայ համապատասխանաւուտրական թղթակցութիւնը, սկսած ցըաքերականէն:

15. ԱՌՑՆԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Աղջկանց բաժնի յատուկ)

Տանտիկնոց առանին պարտականութիւնները.— հմտութիւնական աշխատութեանց.— Ժամանակի իմաստուն գործածութիւն.— Ժրազանութիւն, կոկիկութիւն, մաքրասիրութիւն, խնայամիրական ողի, հաշուազիտութիւն եւ վերահսկողութիւն.— Տղիտութեան, ծուլութեան եւ անբարեկարգութեան, պճնասիրութեան աղիտալի հետեւանքները տան մէջ.— Ծանօթութիւն առողջապահիկ սկզբունքներու.— Խնամք կահ կարասիներու, անօթներու,

զգեստեղէնի, զգուշական միջոցներ հրդեհի, մակաբոյծներու, վնասաբեր մանրէներու դէմ.— Լուացք, արդուկում, կար եւ ծեռագործ: — Խոհագործական բաւարար ծանօթութիւններ եւ գործնական վարժութիւններ.— մանկատածական մանր գիտելիքներ (ի՞նչ խնամք պարտիս տանիկ փոքր քրոջդ կամ եղբօրդ).— Խմաստուն կինը՝ աղքիւր ընտանիկան երջանկութեան:

Էնկերային պարտականութիւններ.— պարկեշտութիւն, պարզասիրութիւն, բարեկրթութիւն, մասնակցութիւն բարեգործութեանց, այցելութիւնք, եւլն.:

16. ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

Բնականին վրայէն գծագրութիւն, ուսումնասիրութիւն մարդկային դէմքի եւ դաշտանիկարի. հեռապատկերի սկզբունքներու կիրառում. յիշողութեամբ գծագրութիւն եւ ուրուազիծ. յիշտակարաններու նմոյշներ արուեստներու պատմութենէն, դասարանէն գորս գծագրութիւն մատիտով, բասդելով, ջրաներկով, եւլն. զարդանկարի աշխատութիւն: — Գծագիտութիւն:

17. ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԲԳ

Զայնամիջոցներու շրջման տեսութիւն. Երեք ծայնով մեծ եւ փոքր դաշնակումներ (արօր). Դաշնակումներու շրջումները. Ա. Կարզի կամ լաւ աստիճաններու դաշնակումները կէտազրութեան տեսակէտէն. Ա. Դ. եւ Ե. դաշնակումները լսելով հասկնալու վարժութիւն. Եղանակ զրելու վարժութիւն. Երգել Ա. Դ. եւ Ե. դաշնակումներուն խազերը զանազան շրջումներով: Տրուած եղանակ մը մէկ երկու ծայն վեր կամ վար գրել:

Ազգային եւ օտար երգեր միաձայն եւ բազմաձայն. գործիական երաժշտութիւն:

18. ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԻԹԻՒՆ

(Մանչերու համար)

Կը գործադրուի նախորդ տարուան ծրագիրը, աւելի ընդլայնուած:

ՑՈՒՑԱԿ ԴԱՍԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԻ
ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ
ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ

19. ԶԵՐԱԳՈՐԾ, ԿԱՐ ԵՒ ԶԵԽԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Աղջկանց բաժնին յատուկ)

Շարունակութիւն եւ ընդլայնում Ե. դասարանի ծեռագործի ծրագրին:

Չեւել եւ կարել ճերմակեղէններ, ներքնազգեստներ եւ շրջազգեստներ.— մերենայով կար.— գուլպայի, ճերմակեղէններու եւ բրդեղէններու բըփիրիզ:

20. ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Կը գործադրուի Ե. դասարանի ծրագիրը:



Կրօնի	Բարեգործութիւն	Համարկելի աշխատանք	Գործադրութիւն	Տեսակների թիւ	Օտար թերու	Ուսումնարին	Դիմութիւնների թիւ	Աշխատանքի թիւ	Ազգ. Պատուիրին	Էնդի. Պատուիրին	Զանազան գործութիւն եւ Նրգ	Քայլ- Կրորութիւն (մանմիւն) և Առանց Սահմանադրութ. (աղջկանց)	Դժուգութիւն	Վարզանի	Վերագործութիւն	Վերագործութիւն	Չեղադակն անուանաց	Չեղադակն եւ ձեռանկան անշահատաց	Չեղադակն եւ կար (աղջկանց)	Ճամարակութիւն եւ բրդեղէններ	Հակակելին անուանաց
Ա.	1	6	6	6	6	1	1	1	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	1	33
Բ.	1	6	5	5	5	1	1	1	1	1	1	1	1	1	1	2	2	2	2	1	33
Գ.	1	5	5	5	5	1	1	1	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	1	33
Դ.	1	5	5	5	5	2	1	1	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	1	33
Ե.	1	5	4	4	4	2	2	1	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	1	33
Զ.	1	3	1	4	4	**	***	1	1	1	1	1	1	1	1	2	2	2	1	1	34

(*) 3 պահ բուաբանութիւն եւ մէկ պահ երկրաշափութիւն:

(**) պահ բուաբանութիւն, մէկ պահ գրանաժիւ եւ մէկ պահ երկրաշափութիւն:

(***) 1 պահ բնագիտութիւն, 1 պահ բնալուծութիւն եւ մէկ պահ բնապատմութիւն:



50. 587